**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-22/9»**

Կնքման վայրը՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի** «27» «01» **2022 թ.**

**Վարձատու՝**

☑ Ֆիզիկական անձ

անուն **Գայանե**

ազգանուն **Միերյան**

հաշվառման հասցե **ք. Մարտունի, Գ. Նժդեհի փող. տուն. 13**

անձնագրի /նույնականացման քարտի/ տվյալներ.

**AP0563891, տրված՝ 18.08.2016թ., 043-ի կողմից**

*(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)*

**Վարձակալ՝**

◉ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյան, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ՝ 900011018562, ՀՎՀՀ՝ 02698732):**

Սույն պայմանագրով Վարձատուն պարտավոր է նշված վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սույն պայմանագրում նշված օբյեկտը:

**Վարձակալության օբյեկտ**

☑ շենք,շինություններ **17.84 քմ.**
(ընդհանուր մակերեսի չափը կամ մակերեսների չափերը ըստ առանձին շենք, շինությունների)
Հասցե **ք. Մարտունի, Գ. Նժդեհի փող. 14/1 բնակարան**
Օգտագործման նպատակային նշանակությունը՝ **Վարձակալվող տարածքը օգտագործվելու է որպես գրասենյակ: Միաժամանակ, Վարձատուն պարտավորվում է ապահովել շենքի անխափան էլեկտրասնուցումը՝ մինչև բաժանորդի հաշվիչը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, աղբահանությունը, պահպանությունը և անվտանգությունը, ընդհանուր օգտագործման տարածքների՝ հակահրդեհային, շինարարատեխնիկական, սանիտարական նորմերի պահպանումը, մաքրությունը և տեխնիկական սպասարկումը, լուսավորությունը:**
Ընթացիկ վերանորոգման պարտավորությունը և ծախսերը կրում է
◉ Վարձատուն:

Հիմնական վերանորոգման պարտավորությունը և ծախսերը կրում է
◉ Վարձատուն:
Երրորդ անձին ենթավարձակալության տրամադրումը՝

- չի թույլատրվում առանց Վարձատուի լրացուցիչ համաձայնության:

Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի վարձակալության օբյեկտի սեփականատերն է, օբյեկտը վաճառված կամ դատական վեճի առարկա չէ:

Վարձատուն երաշխավորում է, որ

- Վարձակալը տեղեկացված է սույն պայմանագրով նախատեսված վարձակալության օբյեկտի՝ այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու մասին:
- Սույն պայմանագրով Վարձատուն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված **24.01.2007** թ. N **2203815** գրանցման վկայականում նշված անշարժ գույքի միավորի՝ նախօրոք որպես առանձին գույքային միավոր չառանձնացված մասը՝ որի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և կազմում է դրա բաղկացուցիչ մասը:

**Վարձավճար**

- Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է **16665** ՀՀ դրամ, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ վճարները: Մատուցված ծառայությունն ընդունվում է Վարձատուի և Վաձակալի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Վարձակալին հանձնելու փաստը ֆիքսվում է Վարձակալի և Վարձատուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Վարձատուն Վարձակալին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Վարձակալին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ: Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Վարձակալը՝ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները, ինչպես նաև Վարձատուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ: Վարձակալը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **2** աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը: Եթե սահմանված ժամկետում Վարձակալը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է.**

- ընթացիկ ամսվան հաջորդող **10** օրվա ընթացքում:

**Վարձավճարը վճարվում է՝**

- անկանխիկ **«Յունիբանկ» ՓԲԸ, 24117100016900** հաշվեհամարին, ՀՀ դրամով: Վճարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**Հողամասի վարձակալության դեպքում հողի կադաստրային արժեքի աճի դեպքում՝**

- վարձավճարը չի փոփոխվում.

**Պայմանագրի ժամկետը**

- **01.01.2022 թ-ից մինչև 25.12.2022 թ.**

**Պայմանագրի ժամկետի ավարտին (կետը լրացվում է ըստ անհրաժեշտության՝ պայմանագիրը ժամկետով կնքելիս)՝**

պայմանագրի գործողության ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունները դադարում են:

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են պայմանագրի կնքման պահին գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

**Ստորագրություններ՝**

**Վարձատու** ______________________________ ______________

**(անուն,ազգանուն)** **(ստորագրություն)**

**Վարձակալ** ______________________________ ______________

**(անուն,ազգանուն)** **(ստորագրություն)**

Սույն պայմանագիրը կողմերը ստորագրել են իմ՝ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի **Մարտունու** սպասարկման գրասենյակի աշխատակից՝ **Էդիկ Դարբինյանի** ներկայությամբ: Նրանց (նաև ներկայացուցիչների, եթե պայմանագրի կողմ հանդես են գալիս Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքը կամ իրավաբանական անձը) անունը, ազգանունը, ինքնությունը ստուգված են:

______________________________

(տարեթիվ, ստորագրություն)